տալ լիալիր ազատութիւն կանանց ամուսնացե-
լոց ընդ ինքեանց, և պատիւ կանանց յաւելա-
ցուցին քան զամենայն իշխանաց, որում փառա-
ւորութեամբ անցուցանէին կանայս սոցայ զկեանս
իւրեանց 'ի մէջ բանակին սոցայ, սովաւ գտան
առատութիւն կանանց ընդ մէջ իւրեանց, քան զի
բնութիւն կանանց միշտ սիրէ փառս, և ամուս-
նացան և յարուցին որդիս և դստերս և արարին
սահման իմաստութեամբ վասն զարգացուցանե-
լոյ որդիս և դստերս իւրեանց, որում մի 'ի բա-
րեգոյն սահմանին զարգացուցանելոյ մանկանցն
էր, այսպէս զի մանուկ ոմն 'ի ժամանակն ամաց
հնգից 'ի ծագել արևու ելանելն նորայ 'ի մահճէն
քնոյ առնուլ պարտ էր նմայ զէն և զասպարս
իւր և ելանել 'ի տանէ գօտի ընդ մէջ ածեալ
զինուորեալ ամենայն կերպարանօք պատրաստի
իբրև զինուոր մտանէր 'ի տեղի որում ամենայն
որդիս հռոմայեցւոց ժողովին անդ իբր դպրա-
տուն, և վարպետ սոցայ մրզէր և կրթէր սոցայ
երկու ժամ ժամանակաւ առ 'ի գործ զինուո-
րութեան. այնուհետ արձակէր նոցայ 'ի տունս
իւրեանց, առ 'ի հրամէնք, նա ևս ունին սահման
մէջ իւրեանց, որ ով ոք մանուկ զի գործ զինու
իւրոյ որում դաս առեալ 'ի վարպետէ իւրմէ
ոչ սերտիցէր և ոչ հաստատիցէր 'ի միտս ո-
րում աւանդեցաւ 'ի վարպետէն իւրմէ և ոչ կա-
րացէր հարկանել նեռաւ իւրով 'ի նշանին կըր-